



Saints Joachim & Anne Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor
Rev. Fr. DIRAN PAPA ZIAN, Archpriest
Տ. ՏԻՐԱՆ ԱՌ. ԲԶՆՅ. ՓԱՓԱՔԵԼԱՆ, ՀՈՎԻԷ

6 Մարտ, 1989

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան,
Առաջնորդ,

Գեր. Սրբազան Հայր,

Ս. Յովակիմ եւ Աննա Հայց. Եկեղեցւոյս, որ ի Փայլոս Հայթց, Իլինոյ, Տարեկան ծխական Անդամական ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 26 Փետր. 1989-ին, Եկեղեցւոյս սրահին մէջ, յաւարտ կիրակնօրեայ պաշտամունքին:

Յետ Միջօրէի ժամը 1-ին, Տքթ. Կարպիս Մկրեան ժողովը բացուած յայտարարեց՝ ծխական Խորհուրդի Ատենապետի Կանգալանքով, եւ նախագահ Արժ. Տ. Տիրան Աւ. ԲՆՅ. Փափագեան Բացման Աղօթքը ըրաւ, յորմէ հետէ ժողովը ընթացք առաւ: Առաջին առթիւ, ներկայութեան ստուգումէն պարզուեցաւ որ 43 տրատու անդամներ ներկայ էին ժողովին, 93 տրատու անդամներու ընդհանուր ցանկէն, որով յայտարարուեցաւ որ ժողովը օրինաւոր մեծամասնութիւն կը զոյացնէ ըստ Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան: Ամիջապէս օրուան դիւանի կազմութեան համար՝ ձեռամբարձ քուէարկութեամբ Սարգիս Պօյաճեան ընտրուեցաւ Ատենապետ եւ Անահիտ Բրիճեան՝ Ատենադպիր:

Ժողովի ընթացքին տրուեցան Հովուի եւ ծխական Խորհուրդի Տարեկան Տեղեկագիրները, ինչպէս նաեւ իրենց տարեկան զեկոյցներով ի հանդէս եկան Եկեղեցւոյ յարակից եւ ենթակայ միւս կազմակերպութիւնները:

Ժողովը զբաղեցաւ նաեւ հին ու նոր հարցերով, եւ տուաւ համապատասխան որոշումներ, միշտ ծուխին բարեւաւումը որպէս նպատակ ունենալով:

Կատարուեցան նաեւ ծխական Խորհուրդի, ինչպէս նաեւ Ընտրողական եւ Հաշուեքըննիչ Յանձնախումբերու ընտրութիւնները, ըստ նախատեսութեան մեր Թեմական Կանոնադրութեան եւ զադոնի քուէարկութեամբ:

Ժողովին Ատենագրութիւնը հաճեցէք ունենալ սոյն թղթածրարին մէջ: Մենք սոյն գրութեամբ կը բաւարարուինք այսքանով, եւ կը փափաքինք ընտրութեան արդիւնքը հաղորդել ձեզի որպէս զի շուտափոյթ ստանանք ձեր վաւերացումը, եւ անցնինք անյապաղ մեր գործերու յանձանձումին պաշտօնապէս:

Ըստ այսմ ուրեմն ստորեւ կուտանք ծխական Խորհուրդի ընտրութեան արդիւնքը:

Գառնիկ Պօյաճեան	33 քուէ
Վան Կիրակոսեան	33 ,,
Անահիտ Բրիճեան	32 ,,
Էտմա Տումանեան	22 ,,

Հայցելով ձեր հայրական օրհնութիւնները,

Մնամք խոնարհաբար, Աղօթակից՝



Saints Joachim & Anne
Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor

Rev. Fr. DIRAN PAPA ZIAN, Archpriest

Տ. ՏԻՐԱՆ ԱՆ. ՔԻՆՅ. ՓԱՓԱՂԵԱՆ, ՀՈՎԻԼ

11 Մարտ, 1989

Սիլվիա Թերզիպաշեան,
Քարտուղար Առաջնորդի,

Սիրելի Սիլվիա,
Եկեղեցւոյս Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովի եւ Ժխական Խորհուրդի
ընտրութեանց արդիւնքը անցեալ շաբթու հաղորդած էի Առաջնորդ Սրբազան Հօր
ծեռագիր նամակով, առ ի չգոյէ Հայերէն գրամբենայի:

Արդ, այդ պակասը դարմանուած ըլլալով եւ Հայերէն գրամբենայ ունենալով
ի ձեռինն, նոյն նամակը նոյնութեամբ մեքենագրած եմ եւ ներփակած որպէս զի
զայն փոխարինէք ձեռագրին ՚հետ:

Սիրով,

Աղօթարար՝

Տ. Տիրան Ա. Քինյ. Փափաղեան,
Հովիւ